ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № «ՇՀԱՊՁԲ-9/16-2»

ք. Երևան 18 -ը օգոստոսի 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ս. Փարիզյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված № 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի № 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված № 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ սույն պայմանագրով նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի,

3.1.8 Ձնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի №№ 1, 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս մնասները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 24,085,500 (քսանչորս միլիոն ութսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 10-ը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի № 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (*Հավելված № 4*) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (*Հավելված № 4.1*):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի №№ 1, 2, 3, 4 և 4.1 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ք. Երևան Բագրևանդի 5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144129 ՀՎՀՀ 00867415 ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետ՝ Պ.Ժ.Կ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	**«ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ** **Ք. Երևան, Դեմիրճյան 40/173** **«Արմսվիսբանկ» ՓԲԸ** **Հ/Հ 2500010305440100** **ՀՎՀՀ 01541006** **տնօրեն** **Ս. ՓԱՐԻՋԱՆ**

Հավելված № 1
№ ՇՀԱՊՁԲ-9/16-2 պայմանագրի

ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Անվանում	Տեխնիկական հատկանիշներ
1	Սինթետիկ չներծծվող մոնոֆիլամենտ միրաբուժական կարանյութ պատրաստված պոլիպրոպիլենից 2-0	Թել ստերիլ միրաբուժական, սինթետիկ, չներծծվող, մոնոֆիլամենտ պատրաստված է պոլիպրոպիլենից:Թելը ներկված է երկնագույն վերջի մեջ լավագույն տեսանելիություն ապահովելու համար: Ասեղը կոռոզիակայուն բարձր ամրության համաձուլվածքը Էտալոյ - համաձուլվածք պատված է սիլիկոնով որը նվազեցնում է շփումը հյուսվածքների և ասեղի միջև:Ասեղի նյութերը և կառուցվածքը ապահովում են բարձր կայունություն անդարձելի դեֆորմացիայի նկատմամբ ոչ պակաս քան 4,6 Հ/սմ որը կանխում է ասեղի փոխելու անհրաժեշտությունը:Թելի միացումը ատրավմատիկ ասեղին ամուր է , ասեղի տրամագիծը թելին միացման մասում ոչ ավել քան 1,15 անգամ, որի շնորհիվ նվազում է հյուսվածքների տրավմատիզացիան ասեղի անցնելու ժամանակ: Ասեղի և թելի տրամագծի մինիմալ տարբերությունը ապահովվում է լազերային գայլիկոնման կամ այլ մեթոդով:Եզակի անհատական ստերիլ փաթեթավորում հնարավորություն է տալիս հասնելու ներքին ներդիրին մեկ շարժման միջոցով:Ներքին միջադիրը պաշտպանում է թելը և ասեղը վնասվելուց (պլաստիկ կամ այլ ամուր նյութ), ապահովում է թելի գծայնությունը տուփից հանելուց հետո կանխելով "ձևի հիշողության" էֆֆեկտի առաջացումը, պարունակում է ամբողջական ինֆորմացիա թելի անվանման բաղադրության, պարամետրերի ինչպես նաև ասեղի պարամետրերի վերաբերյալ որը հնարավորություն է տալիս վերահսկել պարունակությունը անհատական տուփից հանելուց և ստերիլ միրահատական սեղանի վրա դնելուց հետո:Ասեղը ծակող 31 մմ, թելի երկարությունը 75 սմ:
2	Սինթետիկ չներծծվող մոնոֆիլամենտ միրաբուժական կարանյութ պատրաստված պոլիպրոպիլենից (1)	Թել ստերիլ միրաբուժական, սինթետիկ, չներծծվող, մոնոֆիլամենտ պատրաստված է պոլիպրոպիլենից:Թելը ներկված է երկնագույն վերջի մեջ լավագույն տեսանելիություն ապահովելու համար: Ասեղը կոռոզիակայուն բարձր ամրության համաձուլվածքը Էտալոյ - համաձուլվածք պատված է սիլիկոնով որը նվազեցնում է շփումը հյուսվածքների և ասեղի միջև:Ասեղի նյութերը և կառուցվածքը ապահովում են բարձր կայունություն անդարձելի դեֆորմացիայի նկատմամբ ոչ պակաս քան 4,6 Հ/սմ որը կանխում է ասեղի փոխելու անհրաժեշտությունը:Թելի միացումը ատրավմատիկ ասեղին ամուր է , ասեղի տրամագիծը թելին միացման մասում ոչ ավել քան 1,15 անգամ, որի շնորհիվ նվազում է հյուսվածքների տրավմատիզացիան ասեղի անցնելու ժամանակ: Ասեղի և թելի տրամագծի մինիմալ տարբերությունը ապահովվում է լազերային գայլիկոնման կամ այլ մեթոդով:Եզակի անհատական ստերիլ փաթեթավորում հնարավորություն է տալիս հասնելու ներքին ներդիրին մեկ շարժման միջոցով:Ներքին միջադիրը պաշտպանում է թելը և ասեղը վնասվելուց (պլաստիկ կամ այլ ամուր նյութ), ապահովում է թելի գծայնությունը տուփից հանելուց հետո կանխելով "ձևի հիշողության" էֆֆեկտի առաջացումը, պարունակում է ամբողջական ինֆորմացիա թելի անվանման բաղադրության, պարամետրերի ինչպես նաև ասեղի պարամետրերի վերաբերյալ որը հնարավորություն է տալիս վերահսկել պարունակությունը անհատական տուփից հանելուց և ստերիլ միրահատական սեղանի վրա դնելուց հետո:Ասեղը ծակող 40 մմ, թելի երկարությունը 75 սմ:
3	Հյուսված սինթետիկ չներծծվող կարանյութ / պոլիամիդ 6/6 / (4-0)	Թել ստերիլ միրաբուժական, սինթետիկ չներծծվող, մոնոֆիլամենտ պատրաստված պոլիամիդ 6\6-ի սինթետիկ պոլիմերից:Օգտագործվող նյութերը չպետք է ունենան անտիգենային հատկություններ:Թելը ներկված է կոնտրաստային/կապույտ/ գունով որի շնորհիվ ապահովվում է լավագույն տեսանելիություն: Ասեղը կոռոզիակայուն բարձր ամրության համաձուլվածք-Էտալոյ -համաձուլվածք պատված է սիլիկոնով որը նվազեցնում է շփումը հյուսվածքների և ասեղի միջև:Ասեղի նյութերը և կառուցվածքը ապահովում են բարձր կայունություն անդարձելի դեֆորմացիայի նկատմամբ ոչ պակաս քան 4,6 Հ/սմ որը կանխում է ասեղի փոխելու անհրաժեշտությունը:Թելի միացումը ատրավմատիկ ասեղին ամուր է , ասեղի տրամագիծը թելին միացման մասում ոչ ավել քան 1,15 անգամ, որի շնորհիվ նվազում է հյուսվածքների տրավմատիզացիան ասեղի անցնելու ժամանակ: Ասեղի և թելի տրամագծի մինիմալ տարբերությունը ապահովվում է լազերային գայլիկոնման կամ այլ մեթոդով:Եզակի անհատական ստերիլ փաթեթավորում հնարավորություն է տալիս հասնելու ներքին ներդիրին մեկ շարժման միջոցով:Ներքին միջադիրը պաշտպանում է թելը և ասեղը վնասվելուց (պլաստիկ կամ այլ ամուր նյութ), ապահովում է թելի գծայնությունը տուփից հանելուց հետո կանխելով "ձևի հիշողության" էֆֆեկտի առաջացումը, պարունակում է ամբողջական ինֆորմացիա թելի անվանման բաղադրության, պարամետրերի ինչպես նաև ասեղի պարամետրերի վերաբերյալ որը հնարավորություն է տալիս վերահսկել պարունակությունը անհատական տուփից հանելուց և ստերիլ միրահատական սեղանի վրա դնելուց հետո:Ասեղը հետադարձ կորող 19 մմ թելի երկարությունը45 սմ:
4	Հյուսված սինթետիկ չներծծվող կարանյութ /տերեֆթալատի պոլիէսթեր/ (0)	Թել ստերիլ միրաբուժական սինթետիկ չներծծվող, հյուսված, պատրաստված է պոլիէթիլենտերեֆտալատ /պոլիէսթեր/ պոլիքթյուռի ծածկույթով,որը հեշտացնում է թելի անցումը հյուսվածքի մեջով: Թելը ներկված է կանաչ գունով լավ տեսանելիություն ապահովելու համար:Ասեղը կոռոզիակայուն բարձր ամրության, համաձուլվածքի բաղադրությունը Էտալոյ - համաձուլվածքը պատված է սիլիկոնով որը նվազեցնում է շփումը հյուսվածքների և ասեղի միջև:Ասեղի նյութերը և կառուցվածքը ապահովում են բարձր կայունություն անդարձելի դեֆորմացիայի նկատմամբ ոչ պակաս քան 4,6 Հ/սմ որը կանխում է ասեղի փոխելու անհրաժեշտությունը:Թելի միացումը ատրավմատիկ ասեղին ամուր է , ասեղի տրամագիծը թելին միացման մասում ոչ ավել քան 1,15 անգամ, որի շնորհիվ նվազում է հյուսվածքների տրավմատիզացիան ասեղի անցնելու ժամանակ: Ասեղի և թելի տրամագծի մինիմալ տարբերությունը ապահովվում է լազերային գայլիկոնման կամ այլ մեթոդով:Եզակի անհատական ստերիլ փաթեթավորում հնարավորություն է տալիս հասնելու ներքին ներդիրին մեկ շարժման միջոցով:Ներքին միջադիրը պաշտպանում է թելը և ասեղը վնասվելուց (պլաստիկ կամ այլ ամուր նյութ), ապահովում է թելի գծայնությունը տուփից հանելուց հետո կանխելով "ձևի հիշողության" էֆֆեկտի առաջացումը, պարունակում է ամբողջական ինֆորմացիա թելի անվանման բաղադրության, պարամետրերի ինչպես նաև ասեղի պարամետրերի վերաբերյալ որը հնարավորություն է տալիս վերահսկել պարունակությունը անհատական տուփից հանելուց և ստերիլ միրահատական սեղանի վրա դնելուց հետո:Ասեղը ծակող 31 մմ, թելի երկարությունը 75 սմ:
5	Հյուսված սինթետիկ ներծծվող միրաբուժական կարանյութ /ներծծման միջին տևողությամբ 60-90 օր/ (0)	Թել ստերիլ միրաբուժական սինթետիկ ներծծվող, հյուսված պատրաստված է պոլիգլակտին 910 (գլիկոլիդ 90%, լակտիդ10%), ծածկույթով որը հեշտացնում է թելի անցումը հյուսվածքի մեջով (գլիկոլիդ, լակտիդ և կալցիումի ստեարատ). Օգտագործվող նյութերը չպետք է ունենան անտիգենային ակտիվություն և պետք է լինեն ապիրոգեն:Թելը ներկված է մանուշակագույն լավ տեսանելիություն ապահովելու համար:Թելի հաստությունը 6-0 և ավել 75% ամրություն IN VIVO պայմաններում 2 շաբաթ, 50% 3 շաբաթ, 25% 4շաբաթ, ամբողջությամբ ներծծման ժամկետը 56-70 օր:Ասեղը կոռոզիակայուն բարձր ամրության 'Էտալոյ -համաձուլվածքից պատված է սիլիկոնով որը նվազեցնում է շփումը հյուսվածքների և ասեղի միջև:Ասեղի նյութերը և կառուցվածքը ապահովում են բարձր կայունություն անդարձելի դեֆորմացիայի նկատմամբ ոչ պակաս քան 4,6 Հ/սմ որը կանխում է ասեղի փոխելու անհրաժեշտությունը:Թելի միացումը ատրավմատիկ ասեղին ամուր է , ասեղի տրամագիծը թելին միացման մասում ոչ ավել քան 1,15 ասեղի տրամագծի որ առկա է միացման մասի սկզբում, որի շնորհիվ նվազում է հյուսվածքների տրավմատիզացիան ասեղի անցնելու ժամանակ: Ասեղի և թելի տրամագծի մինիմալ տարբերությունը ապահովվում է լազերային գայլիկոնման կամ այլ մեթոդով:Եզակի անհատական ստերիլ փաթեթավորում հնարավորություն է տալիս հասնելու ներքին ներդիրին մեկ շարժման միջոցով:Ներքին միջադիրը պաշտպանում է թելը և ասեղը վնասվելուց (պլաստիկ կամ այլ ամուր նյութ), ապահովում է թելի գծայնությունը տուփից հանելուց հետո կանխելով "ձևի հիշողության" էֆֆեկտի առաջացումը, պարունակում է ամբողջական ինֆորմացիա թելի անվանման բաղադրության, պարամետրերի ինչպես նաև. ասեղի պարամետրերի վերաբերյալ որը հնարավորություն է տալիս վերահսկել պարունակությունը անհատական տուփից հանելուց և ստերիլ միրահատական սեղանի վրա դնելուց հետո:Անհատական փաթեթավորումը հնարավորություն է տալիս կատարել նույնականացում և հաշվարկ սկանավորման միջոցով:Ասեղը ծակող 36 մմ, թելի երկարությունը 70 սմ:
6	Ցանց պոլիպրոպիլենային, ճողվածքների համար ախտահանված 15x10 չափերի	Բաղկացած է 100% պրոլեն 5/0 թելից. Պրոլենը՝ մոնոֆիլամետ չներծծվող պոլիպրոպիլենից բաղկացած կարանյութ է: Ցանցի անցքերի չափը՝ 2մմ, տեսակարար կշիռը 60-65գ/մ2, ձևը՝ ուղղանկյուն, ցանցի հաստությունը՝ 0,5մմ, Ճնշման առավելագույն դիմադրությունը՝ 450-600 մմ.ս.ս.,չափերը 15x10սմ: Ստերիլ գործարանային փաթեթավորումով
7	Ցանց պոլիպրոպիլենային, ճողվածքների համար ախտահանված 6x11 չափերի	Բաղկացած է 100% պրոլեն 5/0 թելից. Պրոլենը՝ մոնոֆիլամետ, չներծծվող պոլիպրոպիլենից բաղկացած կարանյութ է: Ցանցի անցքերի չափը՝ 2մմ, տեսակարար կշիռը 60-65գ/մ2,ձևը՝ ուղղանկյուն,ցանցի հաստությունը՝ 0,5մմ, Ճնշման առավելագույն դիմադրությունը՝ 450-600 մմ.ս.ս., չափերը 6x11 սմ: Ստերիլ գործարանային փաթեթավորումով:
8	Հեմո J-Vac 2163,տափակ տարողություն 300 մլ,Ethicon	J- Vac տափակ հավաքարգ փակ որոնավորման համար Y նման կոննեկտորով: Ստերիլ տարողությունը 300մլ:Գտնվում է սեղմված վիճակում, հնարավորություն է տալիս միացնել երկու դրենաժ:Պետք է ունենա հակառեֆլուքսային փական,հեղուկի մակարդակը ցույց տվող նշումներ :Դրենաժային անցքը պետք է ունենա փական տարողությունը դատարկելու համար: Ստերիլ գործարանային փաթեթավորումով
9	Հեմո J-Vac 2161 տափակ տարողություն 150 մլ,Ethicon	J- Vac տափակ հավաքարգ փակ որոնավորման համար Y նման կոննեկտորով: Ստերիլ տարողությունը 150մլ: Գտնվում է սեղմված վիճակում, հնարավորություն է տալիս միացնել երկու դրենաժ: Պետք է ունենա հակառեֆլուքսային փական,հեղուկի մակարդակը ցույց տվող նշումներ : Դրենաժային անցքը պետք է ունենա փական տարողությունը դատարկելու համար: Ստերիլ գործարանային փաթեթավորումով
10	Հեմո J-Vac 2162 տափակ տարողություն 450 մլ,Ethicon	J- Vac տափակ հավաքարգ փակ որոնավորման համար Y նման կոննեկտորով: Ստերիլ տարողությունը 450մլ: Գտնվում է սեղմված վիճակում, հնարավորություն է տալիս միացնել երկու դրենաժ: Պետք է ունենա հակառեֆլուքսային փական,հեղուկի մակարդակը ցույց տվող նշումներ : Դրենաժային անցքը պետք է ունենա փական տարողությունը դատարկելու համար., 10 հատ մեկ տուփում, Ստերիլ գործարանային փաթեթավորումով

11	Հեմո J-Vac 2160 կլորտարողություն 100 մլ,Ethicon	J- Vac կլոր համակարգ փակ դրենավորման համար: Ստերիլ տարողությունը 100մլ: Գտնվում է սեղմված վիճակում, հնարավորություն է տալիս միացնել երկու դրենաժ: Պետք է ունենա հակառեֆլուքսային փական,հեղուկի մակարդակը ցույց տվող նշումներ : Դրենաժային անցքը պետք է ունենա փական տարողությունը դատարկելու համար:, Ստերիլ գործարանային փաթեթավորումով

Ծանոթություն՝ Ապրանքները պետք է ունենան (ներկայացվում են մատակարարման ժամանակ).
1. Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճեն,
2. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի /ապրանքատեսակների խմբաքանակի/ համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը:
-Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:
- Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Աբովյան, ՀՀ ՊՆ 73014 զորամաս հասցեով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ
տնօրեն

ՎԱՃԱՌՈՂ

Ա. ՓԱՐԻՉՅԱՆ

Հավելված № 2
№ ՇՀԱՊՁԲ-9/16-2 պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Անվանում	Չ/մ	Քանակ	Մեկ միավ գին/ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Մատակարարումը ըստ 2017թ. եռամսյակների	
						III եռամսյակ	IV եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.11.2017թ.
1	Սինթետիկ չներծծվող մոնոֆիլամենտ վիրաբուժական կարանյութ պատրաստված պոլիպրոպիլենից 2-0	հատ	4,650	1,970	9,160,500	4650	
2	Սինթետիկ չներծծվող մոնոֆիլամենտ վիրաբուժական կարանյութ պատրաստված պոլիպրոպիլենից (1)	հատ	1,000	1,980	1,980,000	1000	
3	Հյուսված սինթետիկ չներծծվող կարանյութ / պոլիամիդ 6/6 / (4-0)	հատ	800	1,320	1,056,000	800	
4	Հյուսված սինթետիկ չներծծվող կարանյութ /տեռեֆտալատի պոլիէսթեր/ (0)	հատ	2,000	1,960	3,920,000	2000	
5	Հյուսված սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման միջին տևողությամբ 60-90 օր/ (0)	հատ	3,000	1,583	4,749,000	3000	
6	Ցանց պոլիպրոպիլենային, ճողվածքների համար ախտահանված 15x10 չափերի	հատ	40	28,000	1,120,000	20	20
7	Ցանց պոլիպրոպիլենային, ճողվածքների համար ախտահանված 6x11 չափերի	հատ	50	19,600	980,000	30	20
8	Հեմո J-Vac 2163,տափակ տարողություն 300 մլ,Ethicon	հատ	20	15,000	300,000	20	
9	Հեմո J-Vac 2161 տափակ տարողություն 150 մլ,Ethicon	հատ	20	15,000	300,000	20	
10	Հեմո J-Vac 2162 տափակ տարողություն 450 մլ,Ethicon	հատ	20	15,000	300,000	20	
11	Հեմո J-Vac 2160 կլորտարողություն 100 մլ,Ethicon	հատ	20	11,000	220,000	20	
	Ընդամենը				24,085,500		

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ ռազմաբուժական միավորումների ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ
տնօրեն

ՎԱՃԱՌՈՂ

Ս. ՓԱՐԻՋԱՆՅԱՆ

Հավելված № 3
№ ԾՀԱՊՁԲ-9/16-2 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	CPV	ԱՆՎԱՆՈՒՄ	Ընդհանուր գումար/դրամ/	Նախատեսվում է ֆինանսավորել ըստ 2017թ. համապատասխան ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ.				
				օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	33141121/6/4/2	Սինթետիկ չներծծվող մոնոֆիլամենտ վիրաբուժական կարանյութ պատրաստված պոլիպրոպիլենից 2-0	9,160,500	9,160,500	9,160,500	9,160,500	9,160,500	9,160,500
2	33141121/11/4/2	Սինթետիկ չներծծվող մոնոֆիլամենտ վիրաբուժական կարանյութ պատրաստված պոլիպրոպիլենից (1)	1,980,000	1,980,000	1,980,000	1,980,000	1,980,000	1,980,000
3	33141121/20/4/2	Հյուսված սինթետիկ չներծծվող կարանյութ / պոլիամիդ 6/6 / (4-0)	1,056,000	1,056,000	1,056,000	1,056,000	1,056,000	1,056,000
4	33141121/24/4/2	Հյուսված սինթետիկ չներծծվող կարանյութ /տեռեֆտալատի պոլիէսթեր/ (0)	3,920,000	3,920,000	3,920,000	3,920,000	3,920,000	3,920,000
5	33141121/39/4/2	Հյուսված սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման միջին տևողությամբ 60-90 օր/ (0)	4,749,000	4,749,000	4,749,000	4,749,000	4,749,000	4,749,000
6	33181330/1/4/2	Ցանց պոլիպրոպիլենեային, ճողվածքների համար ախտահանված 15x10 չափերի	1,120,000	560,000	560,000	1,120,000	1,120,000	1,120,000
7	33181330/2/4/2	Ցանց պոլիպրոպիլենեային, ճողվածքների համար ախտահանված 6x11 չափերի	980,000	588,000	588,000	980,000	980,000	980,000
8	33691156/3/4/2	Հեմո J-Vac 2163,տափակ տարողություն 300 մլ,Ethicon	300,000	300,000	300,000	300,000	300,000	300,000
9	33691156/4/4/2	Հեմո J-Vac 2161 տափակ տարողություն 150 մլ,Ethicon	300,000	300,000	300,000	300,000	300,000	300,000
10	33691156/6/4/2	Հեմո J-Vac 2162 տափակ տարողություն 450 մլ,Ethicon	300,000	300,000	300,000	300,000	300,000	300,000
11	33691156/7/4/2	Հեմո J-Vac 2160 կլորտարողություն 100 մլ,Ethicon	220,000	220,000	220,000	220,000	220,000	220,000
		ԸՆԴԱՄԵՆԸ	24,085,500	23,133,500	23,133,500	24,085,500	24,085,500	24,085,500

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեղամատակարարման պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՄԵԳԻԷԼ» ՍՊԸ
տնօրեն

Ս. ՓԱՐԻՉՅԱՆ

Հավելված № 4
№ ՇՀԱՊՁԲ-9/16-2 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի № եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

№	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված № 4.1
№ ՇՀԱՊՁԲ-9/16-2 պայմանագրի

ԱԿՏ №

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված № ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն ազգանուն, անուն

ստորագրություն ստորագրություն